



ԼՐԱԳԻՒ ՍԶԳԱՅԻՆ ԲԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԱՅԼՆ

ՊԱՅՏԱՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

Պարսկաստանի համար տարեշրջանը 5 ֆր. կամ 2 րբլ.ս. Թղթգրմ. հարկը ամեն տեղի համար ուր այս րբլ.ս. մուտքը արգելում է...

Թ՝ ՏԱՐԻ ԹԻԻ 31

1894 ՅՈՒՆԿԱՐ 3 1893 ԳԵԿԵՆՄԵՐ 22 (2.8.) ԶՈՐԵՐԵ ԱՅԹԻ

Կրկնաթիվները և Երթ. օրերը

ՊԱՅՏԱՐԱՆԵՐ

Խմբագրությունը, եթե հարկ համարի, համառոտելով և կառավարման միջոցով կը հրատարակե իրեն զրկուած գրութիւնները...

Les annonces en français et en arménien, sont reçues aux bureaux de la Rédaction (Allées de Meilhan, 44.)

ԲՈՂԱՆԳԱՅԻՆ ԳԻՒՆԻՆ

Ատրպատականի նոր առաջնորդի մահը. — Հայերի և Պարսկաստանի. — Պողոս Եպիսկոպոս Վանի Առաջնորդ. — Սուրբ Բանդե Ե. Կ. պոյսի Ամերիկեան դեսպանը...

ԱՏՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ՆՈՐ ԱՌԱՋՆՈՐԴԻ ՄԱՋԸ

Դեր. Գրիգորիս Արքեպիսկոպոս Աղուանեան, Ատրպատականի նոր նշանակուած Առաջնորդը, որ իւր պաշտօնատեղ կերթար, ցաւով կիմանանք...

ՀԱՅԵՐԻ ԳԱՐՍԿԱՍՏԱՆ

ՍԱԼՄԱՍՏԵՆ մեզ կը գրեն թէ վերջերս Սալմաստի մէջ կը թափարաւան մի նոր շարժում սկսած է փոքր-իշատէ երեւան գալ...

Կուգեն դպրոց, ժողովարան և այլն չինել։ Օտարահայտաւորներն իրաւունք չունին Պարսկաստանի մէջ հոգատէր լինելու։

— ՌԱՇՏԵՆ կը գրեն մեզ թէ Ռաշտի վաճառականապետ Ռոստոմբէկ Մեղիք Ալաշկերտեանց մեռեր է հոկտ. 27/8 նոյեմբերին։ Հանգուցեալ ծերունին որ 30 տարեկէ ի վեր բնակութիւն հաստատած էր Ռաշտի մէջ...

ՊՈՂՈՍ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՎԱՆԻ ԱՌԱՋՆՈՐԴ

Վանէն դեկտ. 14/26ին պատրիարքարան հասած մի հեռագիր պաշտօնապէս կիմացունէ թէ տարահաշակ Պողոս Եպիսկոպոս Վանի Առաջնորդ ընտրուած է Գաւառային ժողովէն։ Վանի մէջ թիւրք կառավարութեան կողմէն մեր ազգային գործերի վրայ եղած ճնշումներէն յետոյ, մի այսպիսի ընտրութեան լուրը զարմանք...

չպատճառու։ Հայ ազգը Կ.պոլսի մէջ Աշգեանը Պատրիարք ունեցած ժամանակ, Պողոս Եպիսկոպոսն ալ Վանի Առաջնորդ զտնտելու տարօրինակ բան չէ։ Բայց նկատողութեան արժանի է թէ այդ եկեղեցական որ անցած տարի Բաղէշի Առաջնորդ ընտրուած ժամանակ, մերժեց այդ պաշտօն, պատճառելով թէ ինք ծերացած է և չէ կարող առաջնորդութիւն անել այս ժամ ինչպէս պիտի ընդունի Վանի առաջնորդութիւնը։ Նա որ 20,000 հայ բնակիչ ունեցող մի թիւս կառավարելու համար ծեր էր անցած տարի, այժմ ինչպէս պիտի ստանձնէ 120,000ի չափ հայ բնակիչ ունեցող մի թիւսի առաջնորդութիւնը։ Մի թիւս մէկ տարի անցնելէ յետոյ աւելի երկտասարդացած կը լինի։

ՍՈՒԼԹԱՆԸ ԵՒ Կ.ՊՈԼՍԻ ԱՄԵՐԻԿԱՆ ԳԵՍՊԱՆԸ

Կ.պոլսէն Փրանսական լրագիրներն իրեն գրուած տեղեկութիւններէ կը քաղենք հետեւեալը։

Ամերիկայի Միացեալ Նահանգներ ի Կ.պոլսի գեսպան Պր. Թըրըլ որ

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՍԱԼՄԱՍՏ

Երկիրը. — Ժողովուրդը եւ կեանքը. — Հողատիրութիւնը եւ տնտեսքը. — Դատարարութիւնը եւ ոստիկանութիւնը. — Կապալի պաշտօնակրները։

(Շար. 30րդ քուէն)

Գ. Բերքերը արեւմտեան լեռնադաշտերը բուսած են։ Իրենց գիւղեր փոքր և աղքատ. իրենք սիննի. այդ պատճառով թշնամութիւն միշտ եղած է իրենց և տիրապետող տարրին միջեւ։ Բերքերը նոյնպէս երկու դասակարգ են, Աղա-աւազակները և րայա-երկրագործները։ Առաջինները սահմանադրի լեռներին վրայ ոչխար կը ստանան, սահմանի երկու կողմի գիւղերը կը կառավարեն, անոնցմէ տուգանքներ կանան տուանց ազգի խնդրութեան և դատարաններին հետ բաժնի անելով, իրենց մասը կապահովեն։ Երբեմն կը պատահի որ եթէ զրկուողը կարենայ իր ձայն Դավթի կառավարութեանը հասցունել, խիստ հրաման կը զրկուի և աւագակը բռնուելով կը պատժուի. բայց յաճախ աւագակ աղան կը

յաջողի սահմանի միւս կողմն անցնել և թիւրքերի մէջ ապստամբութիւն։ Բայց քերտը թիւրք աղաների հողերը կը մշակէ, շատ չքաւոր է և յաճախ գիւղէ գիւղ կը տեղափոխուի յափշտակութիւնների վախէն։ Թիւրքերի Բերքերն ալ յաճախ այս կողմ կանցնին աւարելու։ Բայց քերտի գիւղերը 20ի չափ կը լինին Սալմաստի մէջ, ընդամեն 4-500 տուն բնակիչներով։

Գ. Հրէան կը գտնուի Հին քաղաքի (այժմ աւան) մէջ. այնտեղ 150 տան չափ կը լինին, առանձին մի թաղի մէջ. շրջի մանր առեւտրով և փոխանակաբար գործով կը զրադին։ Իրենց մանրավաճառներ գիւղացիների աները մտնելով, կիները կը շնորհակցեն իրենց ծովերով և ապառիկ վաճառուով. փոխարէն մուրհակներ կանեն անոնց պանդուխտների վրայ։ Եթէ ճիշդ է, թէեւ շատ ցաւալի, լաւ ինչ նայելով, Հրէաները սկսած են աւելի մեծ բաժին ունենալ հայ պանդուխտների դրամական փոխադրութեան մէջ, որովհետեւ հայ վաճառականներէ ոմանք իրենց անճշգրտակցութեամբ և ծանր տոկոսներով կը ներգրծեն գիւղացիները։ Փիշ վաստիկը բայց յաճախորդի թիւը շատցունել, այս եղան է հրէայ ազգի սկզբունքը որ և իր առեւտրական և

սեղանաւորական մեծութեան պատճառ եղած է ուրիշ երկրների մէջ ալ։

Ե. Հայերը Սալմաստի մէջ թիւրքերէն յետոյ կուգան իրենց թուի շատութեամբ. իրենց գիւղերէ ոմանք զուտ հայաբնակ են. շատերը խառն՝ միւս ազգութիւններով։ Հայթուան որ Տիւմանի արեւմտեան հարաւը կիցնայ 3 քիլոմէթր հեռու, կարելի է հայութեան կեդրոնը համարել թէ՛ թուի շատութեան, թէ՛ զարգացման և թէ՛ դիրքին պատճառով։ Հայթուանէն դէպի արեւելք կիցնայ հեռեւեալ հայաբնակ գիւղերն իրենց մօտաւորութեան կարգով. Տիրիշ (25 տուն) հայ, Եւթմանաւ (10 տուն), Փայաճուի (230 տուն զուտ հայաբնակ), Կալասար (70 տուն զուտ հայ), Ախթիւն (40 տուն), Դալա (35 տուն), Դէպի հարաւ՝ Բէլէշան (20 տուն), Սառնա (70 տուն), Զիլէճուզ (6 տուն), Մահլամ (200 տուն զուտ)։ Դէպի արեւմուտք՝ Խոսրով (10 տուն), Սաւա (125 տուն), Հին քաղաք (70 տուն), Հալիվրան (60 տուն զուտ), Աւանիկ (10 տուն), Նըմանաւ (15 տուն), Փայիկ (25 տուն)։ Դէպի հիւսիս՝ Սյան (15 տուն), Վարդան (35 տուն), Սանաթիկ (60 տուն)։ Մօտաւորապէս 1500 տուն կը լինին բոլոր Սալմաստի Հայերը։

Այս տուններէ մօտիկ մէկ վեցերորդը

մատղի տուն կը կոչուին, այսինքն այն պիտի տուններ որոնք աղքատ լինելով գիւղի տուրքերին չեն մասնակցիր, մատուցողորմութիւն ալ կընդունին։ Սալմաստի Հայերը կեդրոն մեծ գիւղերին մէջ բաւական հանգիստ և բարեկեցիկ են. իսկ լեռնադաշտերին մէջ և այնպիսի տեղեր ուր չնչին փոքրամասնութիւն են օտար տարրերի մէջ, աղքատ և անպաշտպան են։ Այս պատճառով այդ գիւղերէ գաղթելու դանդաղ մի հոսանք կայ դէպի կեդրոն հայ գիւղերը ուր հողը իր իրական արժէքէն շատ բարձր գներով հասած է, Հայթուանի մէջ հողի սղութիւնը մեծ քաղաքների հողի սղութեան հասած է, շնաւթելով որ վարձու տներ չեն շինուիր և ոչ աւարտներն ու այգիներն իրենց գնի 5 0/0 տոկոս արգելեւ կուտան։

Սալմաստի Հայերը գիւղերի մէջ ցըրուած լինելով և չունենալով մի մեծ հայ կեդրոն, հայաքաղաքացիութիւն, արհեստի, առեւտրի և կրթութեան մասին շատ ետ մնացած են։ Իրենց երկաթագործները մանգաղ և գուլթան շինել գիտեն, հիւսնների գործիքը ուրաք մը, հարթիչ մը և սղոց մէ։ Տեղական կտաւ ներկերու արհեստովը երբեմն կը զբաղեն շատ առուներ և Սալմաստի հարստութեան մի աղբիւր էր այդ. սակայն հիմա իրենց ներ-

չստ ժամանակ չէ որ իր պաշտօնի գլուխն անցած է, Մեծ Եպարքոսին հետ իր առաջին տեսակցութեան միջոցին, ինչպէս և Սուլթանի ունկընդ-րութեան ներկայացած ժամանակ, պարզապէս յայտարարել է թէ ամե-րիկեան կառավարութիւնը չուզեր ա-մեն պարագայի մէջ և ամենքին դէմ իր պաշտպանութիւն ընծայել այն մի քանի հաշար թիւրքիստեան հայերի որոնք դիւրըմբռնելի ծածուկ նպա-տակով (2) բողոքական եղած են և ի-րենց վարմունքով թիւրք կառավա-րութեան դանդաղեցրելն առիթ կու-տան . քաղաքական պատճառներով վտանգի ենթարկուած Հայերն իրենց բազմի պիտի ձգուին պարզապէս և օսմանեան կառավարութիւնն ազատ է զաննք բանտարկել բերդարդել անել կամ աքսորել, առանց քաջուելու թէ Ամերիկեան կառավարութիւնը ատոր համար կը բողոքէ իր դէմ : Արդէն նախորդ դեպքան Պր. Թոմսըն ալ ոչ մի պաշտպանութիւն չարաւ բողոքա-կան Հայերին Մարտոնի դէպքի միջ-ջոյն և մինչև իսկ Էնկիլերի դատա-վարութեան վերջնապաշտն ալ չսպա-սելով, Կ.պօլսէն մեկնեցաւ :

Պր. Թոմսըն այս յայտարարու-թիւններ Սուլթանին շատ հաճոյք պատճառելով, Եֆէփաթի պատուա-նշանի ժապաւենը ընծայեց Տիկին Թը-րըլին որ այժմ Ամերիկա մեկնած է և Օրիորդ Թըրըլին որ այժմ Ֆրանսա եկած է, ձմեռը Նիս անցունելու համար : Թըրըլի ընտանիքը Կ.պօլսէն չմեկնած, դեկտ. 23-ի կիրակի օր ճաշկերոյթի հրաւիրուեցաւ պալատը : Կը հաւաս-տեն թէ այս առաջին անգամն է որ մի ամերիկեան դեսպան Սուլթանին սե-ղանակից լինելու պատիւը կ'ունենայ, իրեն յատուկ ճաշկերոյթ տրուելով :

ՆԱՄԱԿ ՊՈԼԻԿԱՐԻՅԷՆ

Փետրվար, 10/22 դեկտեմբեր 1893

Երբեմն ցոյց տրուած ազգային բուռն ոգեւորութենէ մի զկնի թոյլ

կած կտուր (չիլա) եւրոպեան տարազա-գործութեան առջեւ տեղի տուած, հո-գեւորքի մէջ է : Դաշտին մէջ երկրագոր-ծութեան հողը քիչ լինելով և հեռու տեղերն ալ անապահով, ձեռքերի բազ-մութիւնը երկրէն դուրս՝ Ռուսաստանի մէջ կը փնտռէ աշխատութիւն . այսպէս Կովկասեան երկաթուղու գծին վրայ, մա-նաւադ թիֆլիզ Սեւ ծովի բոլոր նաւա-հանգիստները, Տոնի և Վոլգայի քաղաք-ները և գլխաւորապէս Ռոստով՝ Սալմաս-տի միակը, խանութայնը, վաճառական — փոխյաճին բազմութեամբ կերելին : 2000է պակաս չեն լինիր այդ պանդուխտ-ներ, նկատելով որ ամեն տուն պանդուխտ ունի և շատ տների ամբողջ չափահաս արուները դուրս կը գտնուին : Պանդու-տութիւնն այժմ ալ այնքան արմատացած է տարածուած մի սովորութիւն եղած է որ կարելի չունեցողն ալ կը պանդուխտ, նա որ կրնայ իր տան մէջ երկրագործու-թեամբ կամ տեղական մի փոքր առեւտրով ապրիլ, դրամագլուխ ալ կրնայ ձեռք բերել, այն ալ անգամ մը ինքզինք Ռու-սաստանի կողմը կը գարնէ : Պանդուխտու-մունքիւնը այնքան կուրցուցեր է ծնող-ներն որ իրենց զաւակներ երկրին մէջ արհեստի ալ չեն դնել : Դավրէժէն եկող մի հայ քերական տեղացիներէն աշկերտ չկրնար ճարել :

ողով յարատեւել աննախանձելի շա-ղի մը մէջ՝ արդարեւ անպատուաբեր էր Ֆիլիպէյն Հային համար : Քաղա-քիս Գրասխիսց եղբայրութիւնն որ երկար տարիներէ ի վեր գոյութիւն ունի և որ սակայն մինչև մօտ ժամա-նակներս լոկ իր անուամբ լսելի կը լի-նէր գողցես, վերստին կը ներկայանայ մեզ նորապէս կազմակերպեալ և ոգե-ւորեալ վիճակի մէջ, ըմբռնելով ան-շուշտ որ ինքն եւս ունի մի կոչում, Թ. ըով պարտի իւրովսան նպաստել ազ-գային յառաջդիմութեան սուրբ գոր-ծին :

Յիշեալ ընկերութիւնն Հայոց Թա-ղին մէջ վաճձեց մի գեղեցիկ տուն, ուր պիտի ունենանք մի ընթերցարան, մի դրօսաւայր և մի «քրիպ» . հետե-ւապէս, հայրենասիրական և այլ օգ-տակար գործեր և թերթեր կարգաւոր, ազգային խնդրի ու կեանքի մասին խօսելու, խորհելու փափաք ունեցող և իրենց պարագայ ժամերն անմեղ զուարճութեամբ անցունել ուզող Հա-յերն, առաւելապէս Հայ երիտասարդ-ները, պիտի ունենան այսուհետեւ մի յարմար տեղ ուրոյն շրջանակի մէջ և չ'պիտի հարկադրին երթալ սրճարան. ներք Բագոսի երկրպագուաց և «էն-ֆիլէ» քաջողներու մօտ նստելու, ու նայնաբանութիւններ լսելու համար :

Գալով մեր վարժարանաց չինու-թեան, որոյ մասին ժամանակին գրած եմ արդէն, պէտք է ուրախութեամբ յայտնեմ թէ վարժարանաց կողմէն արական դպրոցն լմնցած և արդէն բացման հանդէսն ալ կատարուած է նոյ. 14/26-ի կիրակի օրը . բայց այն-պիսի տխուր կերպով որ կը պատ-րաւորէ զիս մի քանի խօսք ընելու այդ մասին :

Նոյն կիրակի օր ըստ սովորու-թեան գնացինք եկեղեցի, ուր եկող-ներ շատ աննշան թիւ մը կը կազմէին : Բանկալին ճակատը փակցուած մէկ ազդ, որ ստորագրութիւն կամ կնիք չ'էր կրել, կը ծանուցանէր. «Ս.յօօր յետ արձակման Ս. եկեղեցւոյ, քաղա-»

Պանդուխտներին մէջ միայն վաճառ-կան փոքր մասն է որ թէ՛ երկրին մէջ և թէ՛ դուրս եղած ատեն գործով կը զբա-ղի. առեւտրական տունները որոնց կեդ-րոնները Սալմաստ են, մեծ ու փոքր 15 կը լինին, նշանաւոր տունները Կալասարի և Փայաճուխի մէջ են : Այդ վաճառական-ներէ զբաղումն է Սրմի չոր խաղողը, չոր մրգերը, շրվակայքի կաշին, կտաւը ար-տահանել Ռուսաստան, զիւղացիներին փոխառութիւններ անել, պանդուխտ-ների դրամական փոխաբերութիւնը կա-տարել, րեւնց կեանք շատ սահմանափա-կուած է իրենց գործի և իրենց տան մէջ, հանրային կեանքէ, յարաբերութիւննե-րէ կը խրտչին : Նիթէ ուղեք, իրենց դիրք կը ներէ հասարակութեան առաջնորդ-դի և պաշտպանի դերը կատարել : Ան-ցեակն մէջ այդ Սալմաստի վաճառական և կալուածատէր դասերէն երբեմն ելած են անձեր որոնք իրենց առատաձեւն, վեհանձն կերպերով ազգեցութիւն ու-նեցած են բոլոր Սալմաստի վրայ և մի կերպով հանրային գործի ղեկավարի և հաշտարար դատաւորի դերը կատարած են :

(Շաքունակեի)
ԻԼՎ ՆԻՊ

քիս վարժարանց նորակառոյց վար-ժարանի բացման հանդէսը տեղի պի-տի ունենայ և խաչահանգիստ պիտի կատարուի : Որոշեալ պահուն ելանք դպրոց, յայտարարուած հանգիստն բացառիկ ոգեւորութեան մասնակ-ցելու և աւելի քան 3 ժամ Շարականի երգեցողութեանց մոտիկ ընելէ ետք, քիչ մալ ազգային սրտագրաւ երգեր լսելու : Այլ աւա՛ղ, որպիսի յուսախա-րութիւն : Մի քանի պառաւներ և ժողովրդեան մէկ աննշան մասը ոտքի վրայ կապաւէին նորակառոյց վար-ժարանին մէջ որ բոլորովին մերկ էր և նստարան բնաւ չկար. և ահա մեր ծէրպապաններ դաճեալ իրենց շուրջառնեցով և Ս. Մասունք ի ձե-ռին երեւցան սրահին մէջտեղ և սկսան «Զօրութիւն սուրբ Խաչի քո Գրիստոս» : Խաչահանգիստը լմնցաւ. վայրկեանական լուսութեան մետք, երբ ոմանք խաչակնքելով կը մեկնէին, Տ. Խրիստակէս Հայրն ըսաւ. «Ներողու-թիւն, մէկ վայրկեան. վարժարանը լմնցաւ, դասատուաց շնորհիւ յառաջ կ'երթայ վարժարանը ինչապա՛հ, Լեւ. տուածէ գտնէք փոխարէնը, աղանք'ր. Աստուած ձեր խնդիրքներուն կա-տարեալ... կատարեալ խնդիրք տայ» : Հանդէսը լմնցաւ և մենք ցրուեցանք, տանելով մեզ հետ մի տխուր տպաւո-րութիւն այդ բացման հանդէսէն :

Այսպիսի ծաղկեալ քաղքի մը մէջ մեծ զոհողութիւններով և քաջ Հայ զօրավարին անուանը նուիրեալ մեր վարժարանների հանդէսներն այսպէ՛ս պէտք է տօնենք. տնօրէն. դասատու էֆէնտին և իր օգնականն ու սոցա ա-շակերտք ինչո՛ւ երկու խօսք չ'արտա-սանեցին. միթէ՛ այդ ուսուցիչը լուս-կեաց ճգնաւորներ էին և միթէ՛ մեր զաւակները ճգնաւոր կրօնական-ների կուղինք աշակերտ անել. նոյն-պէս ինչո՛ւ լուսեցին վարչական անձինք. վերջապէս ինչո՛ւ չ'ըլին քիչ շատ ճա-շակաւոր բան մը որպէս զի ժողո-վուրդն ալ ոգեւորուէր. միթէ՛ տարին այնքան շատ ազգային հանդէսներ ունինք տօնելու որ այսպիսի հանդէս-ներին նշանակութիւն չտանք : Չէ՛ մի որ մեր այժմեան վիճակին մէջ եկեղե-ցիէ և դպրոցէ զատ ոչինչ ունինք և անոնցմէ դուրս հանդէսներ չենք տօ-ներ : Բայց աստի, դէ՛ թ պատշաճու-թեան համար պէտք չէ՛ որ մասնա-ւորաբար հանգիստն հրաւիրուէին այն պատուաւոր անձերն (դրօնքի Ը-լալու մեղքն ունին) որոց առա՛տ ա-ռատ նուէրներով կարելի եղաւ սուղ ժամանակի մը մէջ կանգնել վարժա-րանը : Բայց ո՛չ. եթէ պատշաճապէս տօնուին դպրոցական հանդէսներն, ե-թէ օր առաջ ծանուցուին և ժողո-վուրդն յոգնախուռն բաղմութեամբ վարժարան դիմէ, այն ատեն վարժա-րանին վրայ ժողովրդեան աչքը կը բա-ցուի, հետաքրքրութիւնը կարժնայ և կամաց կամաց կ'սկսի վարժարանի կացութեան նկատմամբ խօսելու և վի-ճելու, որ գուցէ ոմանց գործին չգար : Մեր աղտներն ալ կերելի թէ շատ փոյթ չունին ժողովուրդը սիրաշահե-լու որմէ շատ բան չ'են անկաւար, քա-նի որ վարժարանը կը մատակարա-

րուի մեր պապերէ մնացած կալուած-ներով : Բայց ինչ որ ալ լինի, փիլիպե-ցի ժողովուրդը պէտք է դիտնայ իր իրաւունքին տէր լինել և դպրոցի նոր շէնքին հետ բարեկարգութեան ու յառաջդիմութեան առաւել զգալի շէնքն ալ կանգնել :

ԼԵՒՈՆ

ՆԱՄԱԿ ՊՈԼԻԿԱՐԻՅԷՆ

Թէհրան, նոյ. 25/7 դեկտ. 1893.

Ներկայ տարւոյս սկզբից՝ Թէհ-րանի «Բաֆֆի» ընկերութիւնն որոյ նպատակն է ընթերցանութիւնը տա-րածել թէ՛ տեղւոյս և թէ՛ Պարսկաս-տանի այլ քաղաքներում բնակուող Հայոց մէջ, բացի իւր միջոցներով բերել տուած ամեն տեսակ լրագիր-ներէն, մի քանի բարեսէր անձերից ևս հետեւեալ լրագիրները և հանդէս-ներն է ստացել իւրեւ նուէր.

«Մուրճ» խմբագրից՝ 1 օրինակ «Մուրճ»

Պ. Ալեքսան Թովսէփեանից՝ 1 օ-րինակ «Հայրենիք»

Եգիպտոսից Պ. Մովսէս Մհի. Ա-նանեանից՝ 1 օրինակ պարսկերէն «Հէքմէթ» :

Նաեւ վերջերս «Մշակ» խմբա-գրութիւնն հաճել է վարչապետի Պր. Մ. Զուրաբեանի նուիրած 4 օրինակ «Մշակ»-ից մէկ օրինակն յաակացնել Թէհրանի «Բաֆֆի» ընկերութեան : Ուստի ընկերութիւնս իւրեան պարտք կը համարէ հրապարակաւ իւր խորին շնորհակալութիւնները յայտ-նել վերոյիշեալ բարեսէր անձանց և խմբագրութեանց որ բարեհաճել են իւրեանց նուէրներով բարենպաստակ ընկերութեանս օգնել :

«Բաֆֆի» ընկերութեան

Տնօրէն

Դոկտոր Բազել

Քարտուղար

Մեսրոպ Թ. Մեսրոպեանց

ՆՈՐ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՆԵՐ

The Ararat անունով և 4 երեսէ բաղկացած անգլիերէն միփոքրիկ ամ-սաթերթ ալ սկսած է հրատարակուիլ Գալիֆօրնիայի Ֆրէսնօ քաղաքին մէջ (Ամերիկայի Միացեալ Նահանգներ) : Այս ամսաթերթի 2րդ թիւը (դեկ-տեմբեր) ստացանք, առանց առաջին թիւը ստացած լինելու. այնպէս որ որոշ չենք գիտեր թէ ինչ է իր ծրա-դիր և ինչ յայտարարութեամբ ներ-կայացած է իր ընթերցողների առջև : Այս երկրորդ թիւի մէջ, տեղական լուրերէ զատ, Էնկիլերի հայ դատա-պարտաճանքի մասին եւս տեղեկու-թիւններ տրուած կան : Ծանուցում. ներն ալ բաւական տեղ դրած են Գա-լիֆօրնիայի հայերի այս փոքրիկ ամսաթերթի մէջ :

Տարեկան բաժնորդագինն է Ամե-րիկայի համար 50 սենթ. ուրիշ եր-կրներին համար 4 չիլին (5 ֆրանկ) : Հրատարակչներն են Պ. Պ. Sergius and Disturnell. Խմբագրատան հասցէն 1147 J Str. Fresno, Cal. (U. S. A.)

Օրդնաւ. Խ. — Մեզ կը հաղորդեն թէ Հաֆթուանի վարժարանը սկսած է կանոնաւորութիւններ կարծած վարժապետը չէ որ կը պաշտօնավարէ այնտեղ :

*** Կրակ. — Շնորհակալ ենք որ կուզէք թղթակցիլ մեզ. բայց ձեր տուած տեղեկութիւններին վստահաւ նայու համար, կը խնդրենք որ նախ ձեր անձի մասին տեղեկութիւններ տաք մեզ :

Լոնտոն. Կ. Յ. — Ձեր շնորհաւորութիւններ կը փոխադարձենք : Կը խնդրենք ծանօթացունել Anglo-Armenian Gazetteի հրատարակութիւնները. բայց ի՞նչ կրնանք գրել մի այնպիսի ամսագրի համար որ կանոնաւորապէս չհասնիր մեր ձեռք, որի թիւերը յաջորդաբար չենք ստացած որ գիտնանք թէ ի՞նչ ուղղութեան կը պատկանի և ի՞նչ կը պարունակէ : Ա թիւը ստանալէ յետոյ, բաւական երկար ժամանակ ուրիշ թիւ չեկաւ և մենք կարծեցինք թէ գուցէ դադարած է. և հաւայ օրեր մի թիւ ալ հասաւ մեր ձեռք որի վրայ N° 4 դրուած լինելէն կը հետեցունենք թէ անկէ առաջ 2րդ և 3րդ թիւեր ալ կան հրատարակուած որոնք չեն զբաղուած :

ԹԻԻՐԻՔԻԱԿԱՆ ԼՈՒՐՆԵՐ

Կ.պօլսէն կը հեռագրեն ֆրանսական լրագիրներին թէ ֆրանսական դեսպանը պաշտօնապէս հրաւիրեց է Բ. Դրան որ պատուիրակներ զրկէ փարիզ գումարուելիք Առողջապահական Համաժողովին : Համաժողովը պիտի լինի յունվար 24ին : Կը յուսացուի թէ Թիւրքիա փութով պիտի պատասխանէ այս հրաւերի քանի որ ինք ուղղակի չա՛հ ունի այս խնդրի մէջ :

Դամասկոսի մահմետականներին մէջ մեծ յուզում կը տիրէ այն մզկիթի վերաշինութեան առթիւ որ սխալմամբ կարծեւ էին թէ քրիստոնեայներն այրած են : Շատ քրիստոնեայներն նեղութիւններ տուին, Եւրոպացիներին նախատեսցին :

Էրզրումի հայաբնակ կեդրոններին մէջ սաստիկ զրգուում կայ : Թիւրքերը բազմութեամբ կը գաղթեն դէպի Եւրոպիա, Երզրատ և Էնկիւրի :

— Չէթինէէն (Գարատաղի մոյրաքաղաք) կիմացունեն թէ օսմանեան պատուիրակը երբ Կոստինիէն ելած կերթար պատժելու այն Ալպանիացիներ որոնք Գարատաղի պատուիրակին վրայ յարձակումարած էին, Ալպանիացիները յարձակեցան օսմանեան պատուիրակին վրայ ալ որ ստիպուեցաւ դէպի Իփէք քաջուրի Այդ քաղաք օսմ. զօրքերով պաշտպանուած է : Յայտնի չէ թէ կուրն մէջ ո՞րչափ մարդիկ զոհուեցան երկու կողմէն :

— Լիբանանի սարերը ձիւնով ծածկուեւր և Պէյրութի շրջակայքները ձիւն տեղացեւր է. ինչ որ շատ քիչ անգամ կը պատահի :

— Եւրոպական նախարարութիւնը արդէն է նիկոմիդիաէն 30,000 քիլէ ցորեն և 10,000 քիլէ գարի զրկել էրզրում :

— Եւրոպիայի մէջ ալ քօլէրան սակեր է տարածուիլ :

ՀՆԴԿԱԿԱՆ ՄԻՒԼԻՈՆՆԵՐ

Այսանգամ ալ «Սապահ» հրատարակած էլուր մը ի Հնդկաստան վախճանած Հայու մը թողած հարստութեան մասին : Այդ հեռուոր երկրին մէջ անտէր թողուած հոծ ժառանգութեանց նկատմամբ շատ անգամ հրատարակութիւնք եղած են, և սակայն անկուտի անձանց բերնին չըրերը վազցնելէ զառ օգուտ մը չեն ունեցած, վասն զի մինչեւ ցարդ անհրապելի կը մնան կալիւթայի Պանքային մէջ հարուստ Հայերու թողած անգլիական ոսկիի կուտակներն իրենց բարդեալ տոկոսներով : Միայն Ս. Էլմիսթին յաջողած է գէթ մասամբ ձեռք անցնել սոյն կուտակներէ իրեն պատկանեալ գումարներն, առանց սակայն հոգ ու ջանք ընելու որ անհատական ժառանգորդք եւս տիրանան իրենց իրաւունքին :

Անկախածելի է որ սոյն մեծագումար ժառանգութիւնք գոյութիւն ունին. և նոյն իսկ անոնց նկատմամբ մէկ քանի ստոյգ տեղեկութիւններ ստացած և 1886ին հրատարակած եմ «Փունշ»ի մէջ երբ այն ատեն կը գրաւէի Սողոմոն Պապուսիի ժառանգութեան խնդրով : 32 կտակներ կան կալիւթայի անգլիական դրամատան մէջ գտնուած 240 միլիոն անգլիական ոսկիի գումարին համար և առանց պայմանաժամը պիտի լրանայ 1900ին. Այդ 32 կտակներուն 7ը կովկասեան Հայոց ժառանգութիւն է, որոնց մին վրացի ըլլալ կը կարծուի :

5ը Պարսկահայոց ժառանգութիւն 9ը Կ.պօլսոյ Հայոց »
11ը Թուրքիոյ »
Եւ հաւաստեց և ոչ մին ստացուած է վասն զի

1. Շատերուն ժառանգորդք գուցէ բոլորովն անտեղեակ, մոքերէնէն իսկ չեն անցուցած հետամուլ այդ ժառանգութեան :

2. Ոմանք կասկածներ ունին միայն և ոչ թէ յայտնի ապացոյցներ իրենց ժառանգորդ ըլլալուն :

3. Իսկ անոնք որ իսկական ժառանգորդներ են, այդ մասին ապացոյցներ, թղթեր, պատմութիւններ ունին և կը հետապնդին, վերջ ի վերջոյ անկարող եղած են լիուրի գոհալու անգլիական կառավարութեան պահանջներն. և այդ պահանջները գոհացնելը անհնար ըլլալու չափ դժուարին է, մասնաւորապէս այնպիսի ժողովրդի մը անհատներուն համար որոնց գտնուած միջավայրն անհամեմատ տարբեր է անգլիական վարչական կարգաւարքերէն. Այսպէս ահա ի զուր աշխատեցան և դրամ վատնեցին Պապուսիներ, Մասեհեաններ, Որբեղաններ, Ալիզեաններ և այլք, միայն և միայն անգլիական բոլոր ձեւ

աւերպութիւնները գործադրել չկարենալով :

Եթէ դժբախտութիւն մըն է զբաղուիլ օրինաւոր ժառանգութեան մը, ոչ նուազ դժբախտութիւն է զրկուիլ նաեւ իր ունեցածէն՝ նոյն ժառանգութիւնը ձեռք անցունելու յուսալաւութեամբ :

Ասոր օրինակներն այնքան շատ են, որ դժուարեցայ այս մէկ քանի տողերը հրատարակել, զգուշացնելու համար անոնք որ այդ վիճակին մէջ կը գտնուին, առանց գոնէ մասամբ ունենալու ի ձեռքն պահանջելի պաշտօնաթղթերը :

Քանի որ հնդկահայ կտակներուն 20ը ճանկահայոց սահմանեալ է, ո՞րքան օգտակար կ'ըլլար որ Ազգ. Պատ. Բարեբարանը մասնաւոր դիմում ընէր Արտաքին գործոց նախարարութեան որպէսզի սոյն կտակներու մասին մանրամասն տեղեկութիւնք առնուին անգլիական կառավարութեանէն, և կամ գոնէ ստացուին և մեր լրագիրներու մէջ եւս հրատարակուին այն ծանոթութիւնք զորս Անգլիոյ օրագիրներուն մէջ պարբերաբար հրատարակել կուտայ անգլիական կտակաց Տնօրէնութիւնը. Շատ ստիպողական է վերջապէս միջոց մը խորհիլ գոնէ այդ կտակներէ մին ստանալու, վասն զի, ինչպէս ըսինք ի վերեւ, հազիւ 7 տարի մնացած է սահմանեալ պայմանաժամին լրման, ուսկից ետքը ի հարկէ ամեն ձեռնարկ անօգուտ կ'ըլլայ : Ահա խնդր մը որ ամեն ջանք ու զոհողութիւն կ'արժէ :

ՄԵԼԻՔ ՊԵՏԼԻՔԾԵԱՆ (Հայրենիք)

ՅԻՄՆԱԿ

Էկ-Մօրթի աղահանքերին մէջ բանող իտալացի և ֆրանսացի գործաւորներին միջեւ անցածները պատահած կռիւլ՝ սրին զոհ եղան երկու կողմէն ալ մի քանի մարդիկ, քննութեան ենթարկուելով, Անկուլէմի դատարանին ներկայացուած էր խնդիրը. իտալական հիւպատոսը ներկայ կը գտնուէր ամեն անգամ դատավարութեան թէեւ ֆրանսացի գործաւորները, մինչեւ որ զօրքեր հասած էին յուզումը դադարեցունելու համար, իտալացի բանուորների յարձակումը փոխարինած էին խիստ կերպով և այդ վերջիններէ մի քանին մեռած էին, բայց երգուեալների դատարանը ներկայութիւն ուր իտալացիները, թէեւ աւելի վնասուած, բայց իրենք նախաւոր ձեւով եղած և այդպէս զրգուման և անձնապաշտպանութեան համար յուզման պատճառ տուած էին, ամենքն ալ անպարտ արձակեց և այս կերպով փակեց Էկ-Մօրթի միջադէպը :

Իտալական լրագիրներին մեծ մասը դժգոհ են Անկուլէմի այս դատավճռէն :

ԱՐՄԵՆԱՆԻ ԼՈՒՐՆԵՐ

Ռուս կառավարութիւնը, չնայելով որ ինք ռազմավարքի գործաւորան

ներ ունի Ռուսիայի մէջ, այս միջոցին Ամերիկայի քանի գործարանատէրերի ալ դիմած և անոնց հետ պայմանագրութիւն արած է ռազմավարք գնելու համար :

— Լրագիրները կը գրեն թէ Բօլ Ռայմ անուն մի Գերմանացի մի նոր նիւթ հնարեր է որով լեցուած ուռւաբը թշնամու բանակին վրայ պայթած ժամանակայնպիսի ծուխ և մթութիւն պիտի տիրեն որ զօրքերի աչքերը չկրնան տեսնել և մուխին ազդեցութեան սկսին հազար փոնգաւոր, պոռալ և կուռելուանկարող մի վիճակի ենթարկուիլ :

— Պէրլինէն կը հաղորդեն թէ Պիսինկա զօրավարը որ Կ.պօլսի կերթայ, մի երկար տեսակցութիւն ունեցեր է վիլհելմ կայսրին հետ :

— Անգլիական կառավարութիւնը Երեսփոխանական ժողովին առջեւ յայտարարեց թէ մտադիր չէ կիպրոս կղզու Ֆրանկուսթա քաղաքին առջեւ նաւատորմի կայան կամ աւելւորական նաւահանգիստ շինել որովհետեւ այդ շատ ծախքի կը կարօտի :

— Ռուս կառավարութիւնը մտադիր է Գանուբ գետի ֆիլիպի թեւը որ իր երկրի մէջ է, խորունկացնելով նաւարկելի դարձունել : Որովհետեւ այդ գործողութիւն ահագին ծախքի կը կարօտի, կրնայ հասկցուիլ թէ Ռուսիա որքա՛ն մեծ կարեւորութիւն կուտայ ատոր :

— Պուլկարի ֆերտիլիտէ իշխանը ցնցղատապէ (bronchite) հիւանդացեւ է :

— Օդէսաէն կը հեռագրեն թէ Սեւծովի և Գանուբի շոգենաւային ընկերութիւնը երկու շոգենաւար ապսպրած է որոնք պատերազմի ժամանակ կառավարութիւնը պիտի կրնայ գործածել իբրեւ պատերազմանալ : Սեւծովի կամաւոր նաւատորմին վրայ 3 նոր պատերազմանաւեր ալ պիտի աւելնան մի քանի շաբաթ յետոյ :

— Պետերբուրգէն կը հեռագրեն թէ գեղեթիկ մի քանի վարժարաններին մէջ քօլէրա երեւան ելած է :

— Իտալիայի մէջ գործերի գրուութիւնը կը ծանրանայ : Ժողովրդական յուզումները հետզհետէ աւելի կը տարածուին : Կառավարութիւնը մըտադիր կերեւի խիստ միջոցների դիմելու :

— Չէնովաի մէջ յունվար 1ի գեղերը մի քանի դինով իտալացիներ ֆրանսական հիւպատոսարանի դիւնանշանը քարկոծեւր էին : Ազոնցմէ երկուքը ձերբակալուեցան և իտալական պաշտօնեայներէ մին այցելելով ֆրանսական հիւպատոսին ցաւակցութիւն յայտնեց որով միջադէպը փակուեցաւ :

— Աթէնքէն կը հեռագրեն թէ կերակի օր Երեսփոխանական ժողովատեղին առջեւ դրուած ուռւաբը թէեւ տիւնամիթ կը պարունակէր, բայց այնչափ քիչ որ չէր կրնար պայթում առաջ բերել : Կերեւի թէ վաշտանալու համար միայն արած էին : Ժողովուրդը շատ գրգռուած է չարագործներին դէմ :

«ԱՐՄԷՆԻԱ»Ի ԲԱԺՆՈՐԴՆԵՐԻՆ

Արմենիայի ներկայ Յրդ տարեշրջանի սկիզբը մենք ստիպուեցանք առժամայէս չարաթը մէկ թերթ միայն տալ մինչեւ զարաւարկան դժուարութիւնները կարգադրուիլը, խոստանալով միանգամայն որ այդ միջոցին պակաս մնացած թիւերը դարձեալ տանք մեր բաժնորդներին :

Գրէթէն Հայ չգանուած մի տեղ և նիւթական ոչ-ընդարձակ միջոցներով Հայերէն մի թերթ կանոնաւոր ճշգրտութեամբ հրատարակելու դժուարութիւններին անոնք միայն ծանօթ կը լինին որոնք փորձառութիւն ունեցած են և կամ հրատարակչական գործին հայ ազգի մէջ ունեցած վիճակին խեղճերին կը հասնի : Ուստի մեր կամքէ անկախ եղող պատճառներին ներդրումութեամբ կը նային անտարակոյս :

Ինչպէս կը տեսնեն մեր բաժնորդներ, մեղքէ մեղած այդ յանկարծազէպար գեղբին ևս այդքան լինելով արդէն, հոգեւորական ամսի կէսէն ի վեր սկսած ենք դարձեալ շարաթը 2 թերթ տալ, շորեքշաբթի և շաբաթ օրերը : Այդ հաշուով, օգոստոսի 15էն մինչեւ հոկտեմբերի 15, երկու ամսի միջոցին 8 թերթ պակաս ելած եղաւ որոնց փոխարէն մէկ ամիս աւելի թերթ պիտի տանք մեր բաժնորդներէ անոնց որոնք Յրդ շրջանի սկզբէն բաժնորդագրուած են : Յայտնի է որ ներկայ Յրդ շրջանը կսկսի օգոստոսի կէսէն և կը տեսնէ մինչեւ 1894 ապրիլ ամսի վերջը : Հետեւապէս անոնք որ սկզբէն բաժնորդ գրուելով 5 ֆրանք միայն վճարած և 2 ամիս բաժնորդագրութեան աստացաքիր առած են, իրենց բաժնորդագրութիւն փոխանակ հոկտեմբեր 15ին վերջանալու (ինչպէս գրուած է ստացաքիրի մէջ), իրաւունք կունենան Արմենիայի ստանալու մինչեւ 1893 նոյեմբեր 15 : Տաս (10) ֆրանք վճարելով 4 ամիս համար աստացաքիր ունեցողները բաժնորդագրութիւնը, փոխանակ դեկտեմբեր 15ին (ինչպէս գրուած է իրենց ստացաքիրի մէջ), կը տեսնէ մինչեւ 1894 յունվարի 15 : Իսկ ամբողջ շրջանին համար 20 ֆրանք վճարածները բաժնորդագրութիւնը, փոխանակ 1894 ապրիլի վերջին (ինչպէս գրուած է իրենց ստացաքիրի մէջ), պիտի տեսնէ մինչեւ 1894 մայիս ամսի վերջը :

Անոնք որ ներկայ Յրդ շրջանի Ա թուին բաժնորդագրուած չեն, իրենց թերթեր չարաթը 2 անգամէն պակաս ստացած չլինելով, ինչպէս իւրաքանչիւր ամսի նոյնպէս և 1894 մայիս ամսի թերթերն ստանալու համար ալ կը պարտին վճարել 2 1/2 ֆր. : 1894 մայիս ամսէն աւելի բաժնորդագրութիւն չընդունուիր որովհետեւ ինչպէս արդէն մեր սովորութիւնն է, այն ժամանակ կսկսիք բաժնորդագրել ճշգրտել յաջորդ շրջանի համար երբ նոյն շրջանի բաժնորդագրութեան բացուած լինելն ու պայմանները կը հրատարակուին Արմենիայի մէջ :

ՄԱՍՈՒ ԳԻՐՔԵՐ

Հետեւեալ գրքերը կարելի է ըստանալ Արմենիայի խմբագրատունէն իրենց առջեւ նշանակուած գիներով որոնց մէջ հաշուուած է և զրկելու փոստի ծախքը :

Արժէքը կանխիկ վճարուած գրքեր զրկուի :

Հ. Բարսեղ Սարգիսեան, Ուսում տնասիրութիւն Մանիքէա Պաղիկեան թոնրակեցիներու աղանդին և

Գր. Նարեկացու թուղթը (կրօնական նորելուկ դադափարներէ տարածման պատճառով Հայաստանեայց ժողովրդի մէջ ծագած երկարատեւ և մեծ յուզումներէ մի առանձին ուսումնաւորութիւնն է որի մասին գրուած չկայ Հայոց պատմութեան դասագիրքերին մէջ) :

2 ֆր. 20 սնթիմ. :

Գիշտ Քահանայ Աղանեանց, Գիււան Հայոց պատմութեան. Գիրք Ա. Բ. 1780-1834. Տպագր. Թիֆլիզ. 1893 (Հայոց ազգի 54 տարու պատմութիւնը կը ներկայացունէ, մասնաւորապէս էջմիածնի գլխէն անցածները, պատմական վաւերութիւններով : Սկիզբը դրուած է կարբեցի Յովհաննէս կաթողիկոսի պատկերը : Այս աշխատութիւն արժանացած է Սահակ Մեսրոպեան մրցանակին) : 7 ֆր.

Կոստանդին Ապրիլեան, Հայրենիքի գուրս : Վէպիկ. Հրատարակութիւն Մ. Թարգմաղանի (Մեծագոյն բաղդի յոյսերով Հայրենիքէն գուրս ելած մի հարուստ գիւղացու պատահած թշուառութիւնները կը նկարագրէ որ հազիւ իր հայրենիք վերադառնալով հոն կրցած է դառնել իր հանգստութիւն) : 50 սնթիմ.

ՄԱՍՈՒ ԳԻՐՔ ԵՒ ՊԱՏԿԵՐ

Հ. Յ. Վ. Խաչիկոսեան, Կրթարան անդլիական լեզուի (Անգլիերէն լեզուն դիւրին և դործնական ոճով սովորեցունող քերականութիւն մ'է հրահանգներով մէկտեղ) : Ա հատորը կը բաղկանայ 256 երեսէ և Բ հատորը 216 երեսէ. վերջն ալ յաւելուած մը կայ 50 երեսէ բաղկացած որ հայերէն հրահանգներէ անգլիերէն թարգմանութիւնն է : Երկու հատորը միասին 5 ֆր. : (1 տողար ամբերկեան) :

Նշանակք Հայաստանեայց. Մայր Հայաստանի պատկերը՝ Հայոց 4 թագաւորութիւններէ նշանակներովը մէկտեղ փայլուն թղթի վրայ և կանայ, կապոյտ և դեղին գոյներով ներկուած : 1 ֆրանք :

ԼՈՒՍԻՆԵԱՆ ՍՐԲԱԶԱՆԻ ՊԱՏԿԵՐԸ

Տաճկական բռնութեան նահատակ եղող խորէն Նարայէ-Լուսինեան Սըրբազանի պատկերը ընտիր թղթի վրայ տպուած կը ծախուի Արմենիայի խմբագրատունը : Գինն է 65 սանթիմ, փոստի ծախքը խմբագրատունէն վճարուելով :

ՀԱՅՈՑ ՀԱՅՐԵՆԵԱՍԻՐԱՅԱՆ

ՄԻՈՒԹԵԱՆ

Ա. ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳԻՐԻՆ

ՎԱՐԴԱՊԵՏԱՐԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ

ՀԱՏՈՒԹԵԱՆ

Բ. Տպագրութիւն

«Հայոց Հայրենասիրական Միութեան» հրատարակած այս վարդապետ

տարանի մէջ համառօտ կերպով բացատրուած է թէ իւրաքանչիւր հայ. ընեսաւ Հայ ինչ փափաքներ պէտք է ունենայ և ինչ պարտքեր ունի կատարելու :

Կը խնդրուի ամեն հայրենասէր Հայերէն իրենց շրջանի մէջ տարածել այս տետրակ : Մէկ անգամէն 50 օրինակ ծախու առնողին կը զրկուի օփրանքով Հատին գինն է 15 սանթիմ (Պարսկաստանի Հայերին համար 10 սանթիմ) :

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳԻՐԻՆ ԵՒ ՓՈՐՓՈՒԳԱԼԵԱՆԻ

Մ. Փորթուգալեանի հրատարակած գիրքերին վրայ մասնաւոր զեղք կը լինի Պարսկաստանի Հայերին համար որոնց կը զրկուի փակագծի մէջ նշանակուած գիներով :

Ա. ՀԱՅ ԳԻՐԻՆՈՒՆԻ ՄԸ (Սպառած) :

Բ. ՀԱՅ ԳԻՐԻՆՈՒՆԻ

Գ. ՍԱՂՄՈՍ ԻՍՐԱԵԼԻ

Դ. ԱԶԱՏՈՒԹԻՒՆ ՊՈՒԼՂԱՐԻՈՑ ԵՒ

ԿԵՆՍԱԳՐՈՒԹԻՒՆՔ ՊՈՒԼՂԱՐ ԱՊՍՏԱՄԱՐԱՅԱՆ (Սպառած)

Ե. ՀԱՅԱՍՏԱՆԻ ԹՇՈՒՍԴՆԵՐԸ. — (Հայաստանցիների պանդխտութեան տխուր հետեւանքների մէջ փոքրիկ պատկերը կը ներկայացունէ վիպական կերպով) :

Զ. ԳԱՄԱՌ ԳԱԹՊԱ — ԺՈՂՈՎԱԴՐԱԿԱՆ ԸՆԹԵՐՑԱՐԱՆ լետ այլուքէն աւարտելուն (Մեծանուն հայ բանաստեղծին վերջերս գրած ագաթաշունչ ընտիր ոտանաւորներէն 3րդ առանձին տետրակով հրատարակուած են) : 50 հատոր 2 ֆր. և 50 սանթիմ, հատոր (5 սնթիմ) 10 սանթիմ :

Է. ԼԻՆԶԻ ՕՐԵՆԷՐ ՏԱԶԿԱՀԱՅԱՍՏԱՆԻՄ. (Սպառած)

Ը. ԹԻՐԻՔԻԱԻ ՀԱՅՆԵՆ ԵՒ ԻՐԵՆԵ ԴՐԱՑԻՆԵՐ (Թիւրքիայի Հայերին և իրենց գրացի աղգերի վրայ վիճակագրական և ցեղաբանական աւելի և հետաքրքրաշարժ տեղեկութիւններ կը պարունակէ : Թիւրքահայաստանի մէջ բնակող այլ և այլ ազգերէ բնակիչների թուին բաղդատական մէկ ցուցակն ալ կցուած է տետրակին վերջը) : Գին 50 սանթիմ (35 սանթիմ) :

Թ. «ԱՐՄԷՆԻԱ»Ի ՅՈՒՇԱՐԱՐ (Արմենիայի տարեշրջանի թիւերը այժմ բոլորովին սպառած և միեւնոյն ժամանակ շատերի հետաքրքրութեան առարկայ դարձած լինելով, այդ շրջանի մէջ Մ. Փորթուգալեանի գրած առաջնորդող յօդուածներէն գէթ 30ի չափ ամփոփուած են Յուդաքի մէջ որ ութածալ գիրքով 124 երեսներէ կը բաղկանայ) : (1 ֆրանք) : 1 ֆր. 40 սանթիմ

Ժ. ՎԵԹ (Պուլկարի մէջ Թիւրքերի արած բարբարոսութիւններէն մի փոքրիկ պատկեր կը ներկայացունէ և ցոյց կուտայ թէ Պուլկարներն ինչպիսի միջոցների դիմած են իրենց վրէժ լուծելու համար) : (15 սնթիմ) 20 սնթիմ

ԺԱ. ԹՈՒՍԱՐԱՅԱՆ (Յունաստանի մէջ Թիւրքերի արած բարբարոսութիւն

ներէն մի փոքրիկ պատկեր կը ներկայացունէ և ցոյց կուտայ թէ Յայերն ինչպիսի միջոցների դիմած են իրենց վրէժ լուծելու համար) : (0,15 սանթիմ) 20 սանթիմ :

ԺԲ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳԻՐԻՆ ԵՒ ՓՈՐՓՈՒԳԱԼԵԱՆԻ

ՆՄՈՅՇՆԵՐ

Մ. ՓՈՐՓՈՒԳԱԼԵԱՆԻ

ԳՐԱՄ ՈՏԱՆԱՌՆԵՐԻՆ

Մ. Փորթուգալեանի գրած հայրենասիրական ոտանաւորներէ մի քանին ամփոփուած են այս տետրակի մէջ իւրեւ նմոյներ պանագան քաղաքների մէջ և զանազան տպաւորութիւնները տակ իւրերեքեմ գրած ոտանաւորներն որոնք ժամանակին հրատարակուած չի լինելով կորուած են այժմ : Այն մի քանի ոտանաւորներ որոնք իւրեւ նմոյ ամփոփուած են այս տետրակի մէջ, ցիր և ցան կը գտնուին Կ. Պոլիս արպագրուած ազգային երգ արաններին մէջ՝ որոց վերստին տպագրութիւնն վաղուց արդէն արգիւտուած է, և Ասիա և Արմենիայի արգիւտներին մէջ : Նմոյներ մէջ փոքրիկ տեղեկութիւններ տրուած են նաեւ թէ այդ ոտանաւորներ ինչ տպաւորութիւնների տակ ներշնչուելով գրուած են : Գին (10 սանթիմ) 15 սանթիմ :

Ասանցմէ զատ, Արմենիայի խմբագրատան մէջ ծախու կը գտնուին նաեւ Հ. Ալիշանի, Հ. Իսահանի, Հ. Գաթեգին Զարհալէի, Բաֆիի, Ծերենցի հրատարակուած բոլոր գիրքերն, ինչպէս և ուրիշ օգտակար գիրքեր և քարտէշներ Հայաստանի՝ Հայերէն կամ լատինական տառերով և զանազան գիրքերով և ին. և ին. :

Գրավաճառանոցի մանրամաս ցուցակը որ 90 երեսներէ կը բաղկանայ, ցանկացողներին կը զրկուի ձրիապէս :

ԻՄ ՀԱՅՐԱՍՊԱՆ ԸՆԿԵՐԸ

(Կ. ՊՈԼՍՈՑ ՀԱՅՈՑ ԿԵԱՆՔԷՆ ԱՆՈՒՅՄ ՄԻ ԻՐԱԿԱՆ ՎԷՊ)

ԳՐԵՑ ԱՊԼԱՐԻՊ

Այս հետաքրքրաշարժ գրուած կը ներկայացունէ ընտանեկան ախուր պատկերներէ մին ուր կը տեսնուի թէ անբարոյական մի հայր իւր ապականուած վարքուբարքով որչափ չարիքների պատճառ դարձած է և վերջ ի վերջոյ ինք ալ իւր որդու ձեռքով սպաննուած և անհետացած է աշխարհէ : Գին 1 ֆրանք, (75 սանթիմ) :

ՏԵՕՐԷՆ—ԻՄԲԱԳԻՐ

Մ. ՓՈՐՓՈՒԳԱԼԵԱՆԻ

Le Gérant : FÉLIX ENFANTIN.

ՄԱՐՍԵՅԼ

Հայերէն տպարան Մ. Փորթուգալեանի Marseille. — Imprimerie et Papeterie du Midi, Allées de Meilhan, 44.